

վստահութիւնը բոլորովին դարձած: Սիրտը նաեւ հանդարտ էր, այն կողմանէ, որ Արփէնի իրեն իմացուցեր էր թէ ինչպէս Տիկինը իրեն հրամայած էր, որ իր եղբօրը գգուանքէն հեռու կենայ եւ մերժէ:

Նաւը պատրաստ էր եւ միայն հարաւային քամիի մը կը սպասէր Չաւէն, որ կ'ուշանար: Ուստի առաւօտ մը, երբ Ս. Սոփիայի հրապարակի կողմը գնացեր էր պտոյտ մ'ընելու, տեսաւ ժողովրդեան մէջ յուզմունք կար, խումբ-խումբ բաժանուած ամբոխը, կը խոսէին գրգռուած. տեսաւ Անկէլինայ տիկնոջ սպասաւորին հետ վիճող դրացի մարդը նստարանի մը վրայ ելած կը ճառեր, բորբոքած, սկսաւ ուշադրութեամբ մտիկ ընել:

«Այո՛, կ'ըսէր, արքայական գահուկից վրայ դուք կարծէք թէ Կոստանդին անունով կայսր մը ունիք, ոչ, շատ կը սխալիք, կին մ'է, որ կը կառավարէ եւ ամէն կամքը կատարել կ'ուտայ: Այդ կնոջ գրգռութենէն է, որ որդին հօրը Յերակլէսի գերեզմանը բանալ տալու յանդգնեցաւ ականակուռ պսակը հօրը գլխէն յափշտակելու համար: Այդ կնոջ անյագ գրգռութեամբ է նաեւ, որ Մարտինէ կայսրուհուն եւ Նորա որդուն՝ օրինաւոր ժառանգին համար պատրիարքին պահեստի յանձնուած դրամը պահանջուեցաւ եւ արքունի գանձը գրաւուեցաւ: Դեռ ձմեռուան սկիզբն ենք, թանկութիւնը կը տիրէ, այս ձմեռ սովէ պիտի ջարդուինք եթէ այդ կնոջ թագաւորութիւնը տեւէ...»:

— Ո՛Յ է այդ կինը, անունը՛, անունը գրուցէ մեզի,— կ'աղաղակէին հազար ձայն միաբերան:

— Փիլակրիոսի կինն է, Անկէլինան, որ երկանը եւ եղբօր Թումայի հետ բաժնէր են թագաւորութիւնը, ցորենի շտեմարանները գրաւէր եւ արգիլէր են, որ պաշար չի մտնէ քաղաքը. երեւակայեցէք, ժողովուրդք, եթէ այս վիճակը տեւէ աղքատն ի՞նչ կը դառնա...

Չաւէն այս խօսքերուն համբերութեամբ ուշադրութիւն ըրաւ, եւ տեսնելով շուրջ ժողովրդեան գրգռութիւնը եւ մռնչիւնը... ճղքեց ամբոխը եւ վազելով ծովեզր իջաւ, նաւակ մը վարձեց մտաւ մէջ եւ Փիլակրիոսի պալատը գնաց՝ նաւակին սպասել ապսպրեց: Ապահովութիւն եւ հանդարտութիւն կը տիրէին ներսը, մտաւ գաւիթը, եկաւ ցամաքային դուռը, տեսաւ պահապան զինուորները զինաթափ եւ անհոգ նստած կամ իրենց գործերով զբաղած, վասնզի տանուտէրք դեռ պառկած կամ նոր ելած էին. մեծաւ ուշադրութեամբ ականջ կը դնէր եւ փողոցի երկայնքին կը նայէր դարուեր. ամպի պէս մթութիւն մը տեսաւ գագաթը, որ կ'իջնէր, կը մօտէր. առանց դռնապանին թան ըսելու մտաւ ներս